

Մարտ 7, 1978

Գերաշնորհ  
Տ. Քարզէն Եպս. Վարժապետեան  
Հովիւ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ  
Ուաշինկթըն.

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Առաջնորդ Սրբազան Գեր. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան ստացած է համայնքիդ ծխական ժողովին ներկայացուած տեղեկագիրները, ինչպէս նաեւ ժողովին առենազրուիւնը: Վերջնոյն մէջ ըսուած է թէ 97 տրատու անդամներէն 49 հոգի մասնակցած են ժողովին՝ սակայն չէ տրուած ծխական խորհուրդի նորընտիր անդամներուն եւ երկու պատգամաւորներուն ստացած քուէները:

Նորին Սրբազանութեան յանձնարարութիւնն է որ հաճիք առաջին առիթով Առաջնորդարան ղրկել թէ ծխական խորհուրդի նորընտիր անդամներուն եւ թէ նոր պատգամաւորներուն ստացած քուէները որպէս զի վաւերացնէ ծխական ժողովի կատարած ընտրութիւնները:

Խորին յարգանք

Սուրէն Մանուկեան  
Դիւանապետ